

ԵՐԼԱՆ ԲԱՂԱՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ Ռ.Լ.^{1,2}, ՓԵՐԻԿԻԱՆՅԱՆ Ա.Ա.³, ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ Լ.Վ.^{1,2}

¹ Երևանի Մխիթար Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

² Երևանի «Մուրացան» համալսարանական հիվանդանոց, Երևան, Հայաստան

³ Երևանի «Դարմենթեստ լաբորատորիա» ՍՊԸ, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 10/21/2014թ., ընդունված է՝ 02/29/2014թ.

Հասակը հանդիսանում է ամենակարևոր ցուցանիշներից մեկը, որը բնութագրում է երեխայի առողջական վիճակը: Երեխայի հասակի գնահատման համար բժիշկների կողմից օգտագործվում են այսպես կոչված պերցենտիլային աղյուսակները և հասակի կորերը, որոնք հաշվի են առնում հասակի բաշխվածությունն ըստ սեռի և տարիքի: Կարճահասակությունն ախտորոշվում է, երբ երեխայի հասակն ավելի քան -2 SDS փոքր է նույն սեռի և տարիքի երեխաների միջին հասակից, սովորական բնակչության շրջանում: Երեխաների բնակչության մոտ 3%-ը ունեն արտահայտված աճի դանդաղեցում, որը պայմանավորված է տարբեր գործոններով: Կարճահասակությունը կարող է պայմանավորվել ինչպես ներզատաբանական, այնպես էլ ոչ ներզատաբանական պայմաններով: Սակայն ամենարտահայտված կլինիկական դրսևորումներ և ամենածանր կանխատեսումներ ունենում են սոմատոտրոպ անբավարարությամբ հիվանդները, որոնք կազմում են բոլոր կարճահասակ երեխաների 8-9%-ը: Ներկայումս հաստատվել է, որ աճի հորմոնի դեֆիցիտն ասոցացվում է բազմաթիվ խանգարումներով: Հատկանշական են ճարպային ավելցուկը՝ գերազանցապես որովայնային տեղակայումով, մկանային զանգվածի իջեցումն, ոսկրային հյուսվածքի հանքային խտության իջեցումը, ֆիզիկական տոլերանտությունը, խոլեստերինի մակարդակի բարձրացումը և վաղաժամ աթերոսկլերոզի զարգացման հաճախականությունը: Հայտնի է, որ սիրտ-անոթային հիվանդություններով ախտահարման և մահացության ցուցանիշները՝ հիպոպիտուտարիզմի դեպքում, 2-3 անգամ ավելի բարձր են, քան առողջ բնակչության շրջանում:

Համընդհանուր ընդունված պերցենտիլային աղյուսակների հիման վրա շատ պետություններ մշակել են իրենց սեփական ստանդարտները, որտեղ հաշվի են առնում էթնիկական առանձնահատկությունները: Օրինակ՝ Սաուդյան Արաբիայում հասակը գնահատելու համար օգտագործում էին Հարվարդյան ստանդարտները: Սակայն, բնակչության ուսումնասիրությունների հիման վրա պարզվեց, որ 0-ից 5 տարեկան երեխաների մոտ հասակի միջինն ավելի բարձր է, քան ստանդարտներում է: Նմանատիպ հետազոտություն իրականացվել էր Հնդկաստանում, որտեղ հայտնաբերվեց, որ 0-ից 6 տարեկան երեխաների հասակի կորի մեդիանն ավելի ցածր է, քան եվրոպական ստանդարտներին է, ինչը թելադրում է սեփական ստանդարտների ստեղծման անհրաժեշտություն:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է, որ սովորական քոհորտում (հետազոտվող խմբում) 3.3 % երեխաների հասակն ավելի ցածր է -2SDS-ից: Երևան քաղաքում 1500 դպրոցականի մոտ իրականացված հետազոտության արդյունքները հաստատում են ներկայումս օգտագործվող մարդաբանական արժեքների համապատասխանությունը մեր բնակչության նկատմամբ: